

ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՍԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի հիմնախնդրի արդիակա-
նությունը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա
լուծված չլինելու հիմնական բացասական հետևանքներից մեկը իրավուն-
քի սոցիալական արժեքի կորուստն է: Այդպիսի իրադրությունում իրավա-
կան համակարգն ի գործ է չի լինում պաշտպանելու մարդու և քաղաքացու
օրինական շահերը. այն սկսում է ծառայել որպես առանձին անձանց պա-
հանջմունքների բավարարման գործիք, ինչը հանգեցնում է իրավունքի
բարոյական արժեզրկման: Որպես սոցիալական երևույթ՝ կոռուպցիան սե-
փական վերարտադրության պայմաններ է ստեղծում, այն բացասաբար է
ազդում ապագա սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերություն-
ների համակարգի վրա:

Կոռուպցիայի ամենատարածված և վտանգավոր դրսևորումներից է
կաշառակերությունը: Կաշառված պաշտոնատար անձինք, պետության
կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունները «վաճառելով»
կողմնակի անձանց, չափազանց մեծ վնաս են պատճառում անձի, հա-
սարակության և պետության օրինական շահերին, հեղինակազրկում են
պետական իշխանությունը: Կաշառակերության հիմնախնդիրն առավել
սրությամբ է դրվում հատկապես այսօր, երբ կոռուպցիոն դրսևորումները
շոշափում են ժամանակակից մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտները:

Կաշառակերության դեմ պայքարի միջոցների համակարգում իրենց
կարևորությամբ առանձնանում են քրեաիրավական միջոցները, ուստի
կաշառակերության համար քրեական պատասխանատվություն սահմա-
նող նորմերի կատարելագործումն ու համապատասխանեցումը միջազ-
գային իրավական ակտերին պետք է լինեն պետության հակակոռուպցիոն
քրեաիրավական քաղաքականության առանցքային ուղղություններից մե-
կը: Հակակոռուպցիոն քրեաիրավական նորմերի կատարելագործմանն են
ուղղված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ քր. օր.) 2012 թ.
փետրվարի 9-ին կատարված փոփոխություններն ու լրացումները: Այս
փոփոխություններն ու լրացումները մեկնաբանությունների անհրաժեշ-
տություն են առաջացնում:

ՀՀ քր. օր.-ի 2003 թ. ապրիլի 18-ի խմբագրությամբ 311 հոդվածի
(«Կաշառք ստանալը») 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպված էր
հետևյալ կերպ. «Պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի մի-
ջոցով դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ
գույքային այլ օգուտի ձևով **կաշառք ստանալը**, կաշառք տվողի կամ

նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար»:

Այսինքն՝ կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը դրսևորվում էր միայն **կաշառք ստանալով**, իսկ **կաշառք պահանջելը**, **կաշառքի խոստումը կամ առաջարկն ընդունելը** որպես օբյեկտիվ կողմի երկընտրելի գործողություններ հողվածում նախատեսված չէին: Այդ պատճառով կաշառք պահանջելը, կաշառքի խոստումը կամ առաջարկն ընդունելը, եթե պաշտոնատար անձին իր կամքից անկախ հանգամանքներով չէր հաջողվում ստանալ կաշառքը, համարվում էր կաշառք ստանալու նախապատրաստություն: Սակայն ՀՀ քր. օր.-ի 311 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը միջին ծանրության է, և դրա նախապատրաստությունը քրեորեն պատժելի չէ: Այնինչ Եվրոպայի խորհրդի 1999 թ. հունվարի 27-ի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի¹ համաձայն՝ որպես ինքնուրույն հանցագործություն պետք է քրեականացվեն ինչպես կաշառք ստանալը, այնպես էլ այն պահանջելը, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելը: Այսպես, կոնվենցիայի 3 հոդվածը («Ազգային պետական պաշտոնյաների պասիվ կաշառակերությունը») սահմանում է. «Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են, իր ներպետական իրավունքին համապատասխան, քրեականացնելու որևէ պետական պաշտոնյայի՝ դիտավորությամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ նրա կամ ուրիշ որևէ մեկի համար անհիմն որևէ օգուտ **պահանջելը կամ ստանալը կամ նման օգուտի առաջարկ կամ խոստում ընդունելը**, այդ պաշտոնյայի կողմից իր իրավասության շրջանակներում որևէ գործողություն կատարելու կամ դրա կատարումից ձեռնպահ մնալու համար»:

ՀՀ քրեական օրենսդրությունը Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային համապատասխանեցնելու նպատակով ՀՀ քր. օր.-ում 2012 թ. փետրվարի 9-ին կատարված փոփոխությունների և լրացումների շնորհիվ 311 հոդվածի («Կաշառք ստանալը») 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպվել է հետևյալ կերպ. «Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն **ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը**՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաս-

¹ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2006 թ. մայիսի 1-ին:

տելու կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար»: Այսինքն՝ գործող քրեական օրենսդրությամբ, կաշառք պահանջելը, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելը կաշառք ստանալու օբյեկտիվ կողմը կազմող **ինքնուրույն** երկրնորելի գործողություններ են: Դա նշանակում է, որ եթե պաշտոնատար անձը կաշառք է պահանջում կամ ընդունում է դրա խոստումը կամ առաջարկը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում ստանալ կաշառքը, ապա արարքը պետք է որակել ոչ թե կաշառք ստանալու նախապատրաստություն, այլ ավարտված հանցագործություն՝ կաշառք ստանալ:

Համանման լրացումներ են կատարվել նաև ՀՀ քր. օր.-ի 200 հոդվածի 3-րդ մասում («Առևտրային կաշառք»), 201 հոդվածի 3-րդ մասում («Արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը»), 311.1 հոդվածի 1-ին մասում («Պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը») և 311.2 հոդվածի 1-ին մասում («Իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը»):

Իհարկե, կաշառք պահանջելու, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելու քրեականացման անհրաժեշտությունը կասկած չի հարուցում, քանի որ այն պայմանավորված էր ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ: Սակայն, կարծում ենք, որ կաշառք ստանալու և կաշառք պահանջելու, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելու համար հավասար սանկցիայի սահմանումը հիմնավորված չէ և չի բխում պենալիզացիայի՝ պատժի համաչափության սկզբունքից: Կաշառք պահանջելու, առավել ևս դրա խոստումը կամ առաջարկն ընդունելու հանրային վտանգավորությունը ավելի նվազ է, քան կաշառք ստանալու, որովհետև դրանք բնութագրվում են պաշտոնատար անձի հանցավոր մտադրության իրականացման ավելի ցածր աստիճանով, և այդ արարքների համար, մեր կարծիքով, պետք է նախատեսվեր ավելի մեղմ պատիժ:

Կաշառք պահանջելու, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելու և կաշառք ստանալու համար տարբերակված պատիժ նախատեսելու անհրաժեշտությունն ավելի վառ արտահայտվում է ծանրացնող հանգամանքներում կաշառք ստանալու դեպքում: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի 311 հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում տրված են համապատասխանաբար «կաշառք ստանալը», «նույն արարքը» և «հոդվածի առաջին, երկրորդ կամ երրորդ մասերով նախատեսված արարքները» ձևակերպումները, որոնց տրամաբանական և համակարգային մեկնաբանությունից բխում է, որ կաշառք ստանալու ծանրացուցիչ հանգամանքները վերաբերում են ոչ միայն կաշառք ստանալուն, այլև կաշառք պահանջելուն, դրա խոստումը կամ առաջարկն ընդունելուն: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 311 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Պաշտոնատար անձի կողմից **կաշառք ստանալը, այսինքն՝** պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն **ստանալը կամ պա-**

հանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը ...»: Ուստի, պաշտոնատար անձի արարքը պետք է որակվի ԶԶ քր. օր.-ի 311 հոդվածի 2-րդ մասով (պաշտոնատար անձի կողմից **կաշառք ստանալը՝** կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար) ոչ միայն այն դեպքում, երբ նա կաշառք է ստանում ակնհայտ ապօրինի գործողության կամ անգործության համար, այլև երբ դրա համար պահանջում է կաշառք կամ ընդունում է կաշառքի խոստումը կամ առաջարկը: Նմանապես, օրինակ, արարքը պետք է որակվի 311 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (խոշոր չափով կաշառք ստանալը), երբ պաշտոնատար անձը պահանջում է խոշոր չափով կաշառք կամ ընդունում է խոշոր չափով կաշառքի խոստումը կամ առաջարկը: Նշենք նաև, որ օրենսդրական փոփոխությունների պատճառով պետք է վերանայել նաև շորթմամբ կաշառք ստանալու (311 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) ավարտման պահը: Եթե պաշտոնատար անձը կաշառք է պահանջում՝ սպառնալով հակառակ պարագայում կատարել ծառայության գծով այնպիսի գործողություններ, որոնք կարող են վնաս պատճառել անձի օրինական շահերին, կամ դիտավորությամբ վերջինիս դնում է այնպիսի դրության մեջ, որի դեպքում նա ստիպված է լինում կաշառք տալ իր օրինական շահերին սպառնացող վտանգը կանխելու համար, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով նրան չի հաջողվում ստանալ կաշառքը, ապա արարքը պետք է որակել 311 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ որպես ավարտված հանցագործություն: Իսկ մինչև օրենսդրական փոփոխությունները կաշառք պահանջելը 311 հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմի մեջ չէր մտնում, և նման իրավիճակում պաշտոնատար անձի արարքը որակվում էր շորթմամբ կաշառք ստանալու փորձ²:

Հակակոռուպցիոն ուղղվածության քրեաիրավական նորմերի բարեփոխման կապակցությամբ անհրաժեշտ է մեկնաբանել նաև «կաշառք ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը» արտահայտությունը: Կաշառքի խոստումը կամ առաջարկն ընդունելը նշանակում է, որ պաշտոնատար անձը խոսքով, ժեստով կամ այլ գործողությամբ արտահայտում է իր համաձայնությունը կաշառքի խոստման կամ առաջարկի կապակցությամբ, որի հետևանքով կաշառք տվողի համար պարզ է դառնում, որ պաշտոնատար անձը պատրաստ է կաշառքի դիմաց կատարելու ծառայության գծով որոշակի գործողություն կամ անգործություն: Այս առումով Բ. Վ. Վոլժեբկինը գրում է, որ եթե պաշտոնատար անձն այս կամ այն ձևով արտահայտել է իր անհամաձայնությունը կաշառք ստանալու վերաբերյալ, ապա կաշառք ստանալու հանցակազմը բացակայում է³:

Հարց է ծագում. արդյո՞ք կաշառք ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը կարող է դրսևորվել անգործությամբ (արդյո՞ք լռությունը համաձայնության նշան է): Իհարկե, կաշառքի խոստում կամ առաջարկ

² Տե՛ս «ԶԶ քրեական իրավունք, (հատուկ մաս)», Եր., 2004, էջ 762:

³ Տե՛ս **Волжебкин Б. В.** Служебные преступления. М., 2000, էջ 215:

ստացած պաշտոնատար անձի կողմից դրա վերաբերյալ անհամաձայնություն չհայտնելն իր մեջ բովանդակում է կոռուպցիոն վարքագծի որոշ տարրեր, սակայն, կարծում ենք, որ դա դեռևս չի կարող գնահատվել որպես կաշառքի առաջարկը կամ խոստումը ընդունել:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի 34/169 բանաձևով ընդունված «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքի» 7 հոդվածի համաձայն՝ «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձինք չեն կատարում կոռուպցիայի որևէ գործողություն: Նրանք նաև համակողմանիորեն խոչընդոտում են նմանօրինակ ամեն մի գործողություն և պայքարում են նրա դեմ»⁴:

Կարծում ենք, որ եթե իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք (նրանք, ովքեր ունեն հանցագործությունները կանխելու, խափանելու և բացահայտելու օրենքով նախատեսված պարտականություն), ստանում են կաշառքի խոստում կամ առաջարկ և չեն արտահայտում իրենց անհամաձայնությունը դրա կապակցությամբ և չեն կատարում հանցագործությունը խափանելու և բացահայտելու ուղղությամբ իրենց պարտականությունը, ապա դա դեռևս չի նշանակում կաշառքի խոստում կամ առաջարկ ընդունել, քանի որ կաշառք առաջարկողի կամ խոստացողի համար պարզ չի լինում, որ պաշտոնատար անձը պատրաստ է կաշառքի դիմաց իր կամ իր նշած անձի օգտին կատարելու ծառայության գծով որոշակի գործողություն կամ անգործություն: Նման դեպքերում պաշտոնատար անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել միայն պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար՝ ծառայողական պարտականությունները չկատարելու ձևով, այն էլ միայն այն դեպքում, եթե առկա լինի շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահը:

Ինչ վերաբերում է այլ պաշտոնատար անձանց (որոնց վրա օրենքով դրված չէ հանցագործությունները կանխելու, խափանելու և բացահայտելու պարտականություն), ապա նրանց կողմից կաշառքի առաջարկ կամ խոստում ստանալու դեպքում դրա վերաբերյալ անհամաձայնություն չհայտնելը կամ փաստի մասին իրավապահ մարմիններին չհայտնելը չի կարող հանգեցնել քրեական պատասխանատվության: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կաշառակերությունը իրենից ներկայացնում է հանցավոր գործարք, որի մի կողմում հանդես է գալիս պաշտոնատար անձը, իսկ մյուս կողմում՝ այն անձը, ով շահագրգռված է պաշտոնատար անձի համապատասխան գործողությունների կատարմամբ⁵: Հետևաբար, կաշառք առաջարկողը կամ խոստացողը ակնկալում է իմանալ, թե արդյո՞ք պաշտոնատար անձը պատրաստ է կաշառքի դիմաց իր կամ իր նշած անձի օգտին կատարելու համապատասխան գործողությունը կամ անգործություն:

⁴ «Քրեական արդարադատության ոլորտի միջազգային ստանդարտները փաստաթղթերում»: Կազմ. Գ. Թ. Գրիգորյան, Եր., 2011, էջ 14:

⁵ Տե՛ս **Мирошниченко Д. В.** Коррупция и уголовно-правовое воздействие на нее. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юрид. наук. Саратов, 2009, էջ 8:

նը: Իսկ լռությամբ այդպիսի պատրաստակամություն հայտնել հնարավոր չէ: Ուստի, քանի դեռ պաշտոնատար անձի վարքագծից կաշառք առաջարկողի կամ խոստացողի համար պարզ չէ, որ նա պատրաստ է կաշառքի դիմաց կատարելու համապատասխան գործողությունը, կաշառքի խոստումը կամ առաջարկն ընդունելու հանցակազմը բացակայում է: Ինչ վերաբերում է կաշառքի խոստման կամ առաջարկի մասին իրավապահ մարմիններին չհայտնելուն, ապա տվյալ դեպքում արարքը չի կարող որակվել նաև ՀՀ քր. օր.-ի 335 հոդվածով, քանի որ դրանով քրեորեն պատժելի է միայն նախապատրաստվող հանցագործության մասին չհայտնելը, իսկ կաշառք խոստանալն ու առաջարկելը ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածով նախատեսված են որպես երկընտրելի գործողություններ և հանդիսանում են ավարտված հանցագործություններ:

Սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև կաշառք տվողին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ խրախուսական նորմին, որում ևս 2012 թ. փետրվարի 9-ի ՀՀ-18-Ն օրենքով կատարվել է լրացում: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասը սահմանում էր. «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին»: Կատարված լրացումից հետո նշված խրախուսական նորմը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ եթե այդ անձը կաշառք տալու մասին ոչ ուշ, քան 3 օր հետո կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին»:

ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածում կատարված փոփոխությունների կապակցությամբ անհրաժեշտ է պարզաբանել այն հարցը, թե որ պահից է սկսում հաշվարկվել կաշառք տալու մասին հայտնելու եռօրյա ժամկետը: ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասում այդ մասին նշում չկա: Օրինակ՝ Իսպանիայի քրեական օրենսգրքի 427 հոդվածի համաձայն՝ կաշառք տվողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա կաշառք տալու մասին հայտնել է ոչ ուշ, քան կաշառք տալու պահից տասն օրվա ընթացքում⁶:

Խնդիրն այն է, որ ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 1-ին մասի գործող ձևակերպումից բխում է, որ կաշառք տալ է համարվում կաշառք խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը. «Պաշտոնատար անձին **կաշառք տալը, այսինքն՝** պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն **խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը...**»: Այսինքն՝ «կաշառք տալ» և «կաշառք տրամադրել» հասկացությունները նույնը չեն: Եվ ստացվում է, որ ՀՀ քր. օր.-ի 132 հոդվածի 1-ին մասում առկա «կաշառք տալու մասին» հայտնել ասելով

⁶ Տե՛ս «Уголовный кодекс Испании». М., 1998, էջ 187:

պետք է հասկանալ «կաշառք խոստանալու, առաջարկելու կամ տրամադրելու մասին» հայտնել, և կաշառք տալու մասին հայտնելու եռօրյա ժամկետը պետք է հաշվարկվի համապատասխանաբար կաշառք խոստանալու, առաջարկելու կամ տրամադրելու պահից:

Այս առումով քննարկենք հետևյալ օրինակը: Քաղաքացին պաշտոնատար անձին խոստանում է կաշառք տալ, սակայն խոստանալուց հինգ օր անց հրաժարվում է կաշառք տալու իր մտադրությունից և կաշառք խոստանալու մասին հայտնում է իրավապահ մարմիններին: Այս դեպքում նա այլևս չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից, քանի որ կաշառք խոստանալու պահից անցել է օրենքով նախատեսված եռօրյա ժամկետը: Ընդ որում, կաշառք խոստանալու մասին եռօրյա ժամկետն անցնելուց հետո դրա մասին կամովին հայտնելը չի կարող համարվել նաև կաշառք տրամադրելուց կամովին հրաժարում: ՀՀ քր. օր.-ի 36 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության **նախապատրաստությունը** կամ **հանցափորձը** կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը»: Իսկ կաշառք խոստանալը և առաջարկելը չեն համարվում ո՛չ կաշառք տրամադրելու նախապատրաստություն, ո՛չ էլ հանցափորձ, քանի որ 312 հոդվածի 1-ին մասում նշված երեք երկրնորելի գործողություններից թեկուզ մեկի կատարումը համարվում է ավարտված հանցագործություն:

Սակայն եթե քննարկվող օրինակում քաղաքացին շարունակի իր հանցավոր գործունեությունը և կաշառքը տրամադրի պաշտոնատար անձին, ապա հնարավորություն կստանա կաշառք տրամադրելուց երեք օրվա ընթացքում այդ մասին կամովին հայտնելու դեպքում ազատվել քրեական պատասխանատվությունից: Ստացվում է, որ ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասում ժամանակային սահմանափակում նախատեսելով՝ օրենսդիրը կարծես թե անուղղակիորեն նպաստում է որոշ դեպքերում կաշառակերության գործարքները ավարտին հասցնելուն: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասում ժամանակային սահմանափակում նախատեսելը և այն բոլոր երեք երկրնորելի գործողությունների (կաշառք առաջարկելու, խոստանալու և տրամադրելու) վրա տարածելը հիմնավորված են կրիմինոլոգիական և դատավարական նկատառումներով: Նախ, ժամանակային սահմանափակում նախատեսելը թույլ կտա ավելի վաղ փուլում խափանել պաշտոնատար անձի կոռուպցիոն գործունեությունը: Բացի այդ, կաշառք տալու մասին ուշացումով հայտնելը էականորեն նվազեցնում է կաշառք ստանալու փաստի ապացուցման հնարավորությունները: Կաշառք տալու մասին հայտնելու ժամանակային սահմանափակում նախատեսելու նպատակահարմարության մասին գրականության մեջ նշվել է դեռևս 20-րդ դարի 80-ական թվականներին⁷:

⁷ Տե՛ս **Якименко А.** Как усилить борьбу со взяточничеством // «Социалистическая законность», 1986, № 8, էջ 12, **Папиашвили Ш. Г.** Должностные преступления в теории уголовного права, законодательстве и судебной практике. Тбилиси, 1988, էջ 211:

ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ կապված քննարկման է ենթակա նաև այն հարցը, թե արդյո՞ք անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե կանոնի հայտնել է կաշառք խոստանալու կամ առաջարկելու մասին այն պարագայում, երբ պաշտոնատար անձը չի ընդունել կաշառքի խոստումը կամ առաջարկը: Միավորված ազգերի կազմակերպության 2003 թ. հոկտեմբերի 31-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի⁸ 37 հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այն հարցը, որ նախատեսի, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, այն անձին քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու հնարավորությունը, որն արդյունավետորեն համագործակցում է **որևէ հրավախախտման** կապակցությամբ քննությանը կամ քրեական հետապնդմանը, **որն այդպիսին է ծանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան**»: Ուստի, կարծում ենք, որ նշված դեպքում անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, քանի որ կաշառք տալը ևս նախատեսված է նշված կոնվենցիայով, և ՀՀ քր. օր.-ի 312 հոդվածի 4-րդ մասում նախատեսված խրախուսական նորմի նպատակը ոչ միայն կաշառք ստանալու, այլև կաշառք տալու դեպքերի բացահայտմանը նպաստելն է:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող են հավաստել, որ ՀՀ քր. օր.-ում առկա հակակոռուպցիոն նորմերը լուրջ վերանայման ու փոփոխությունների կարիք ունեն:

МИСАК МАРКОСЯН – О реформе антикоррупционных уголовно-правовых норм. – В системе мер, направленных на борьбу со взяточничеством, особенно важны уголовно-правовые нормы. И в числе главных направлений антикоррупционной политики – совершенствование норм, устанавливающих ответственность за взяточничество, приведение их в соответствие с международными правовыми документами. Так, изменения и дополнения от 9 февраля 2012 г., внесенные в Уголовный кодекс РА, преследуют цель усовершенствовать антикоррупционные уголовно-правовые нормы.

Статья посвящена некоторым вопросам, касающимся реформы уголовно-правовых норм, устанавливающих ответственность за взяточничество. В частности, рассматриваются вопросы криминализации и пенализации таких деяний, как вымогательство взятки, согласие на обещание и предложение взятки. Разъясняются также различные аспекты правовой оценки квалифицированных видов получения взятки и раскрывается поощрительная норма – освобождение от уголовной ответственности за дачу взятки в свете законодательных изменений УК РА.

⁸ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թ. ապրիլի 7-ին:

MISAK MARKOSYAN – *On Issues of Reforming Anti-Corruption Criminal-Legal Norms.* – The criminal-legal norms are important and valuable tool in combating bribery. Hence, the improvement of norms setting criminal responsibility for bribery, as well as bringing the latter ones in accordance with the international legal documents referring to struggle against corruption should be considered as one of the main directions of the anti-corruption criminal-legal policy of the state. The amendments of the RA Criminal Code of 9 February 2012 have been directed to the achievement of the mentioned goals.

The presented article is devoted to some issues regarding the reforming of the criminal-legal norms setting responsibility for bribery.

In particular, the issues of criminalization and penalization of such actions as demanding bribe, giving consent for promising and suggestion of bribe have been considered; some aspects of the legal assessment of the qualified types of bribetaking have been interpreted; the content of giving consent for the promising and suggestion of bribe as the manifestation of an objective part of the composition of bribetaking have been disclosed.

The content of encouraging norm on releasing from criminal responsibility for bribe-giving has been discussed in the summary part of the article.